Հավելված N8
ՀՀ էներգետիկայի կարգավորող
հանձնաժողովի 2003 թվականի
հունվարի 13-ի N1Ն որոշմամբ
հաստատված Հայաստանի
Հանրապետության էներգետիկայի
բնագավառում սակագների սահմանման
ու վերանայման կարգի

Երկդրույք սակագնային համակարգում էլեկտրաէներգիայի /հզորության/ առուվաճառքի պայմանագրային հզորությունների սահմանման սկզբունքները

Սույն սկզբունքները տարածվում են էլեկտրաէներգիայի /հզորության/ արտադրության լիցենզիա ունեցող այն անձանց վրա, որոնց նկատմամբ կիրառվում է երկդրույք սակագնային համակարգ:

1. Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի լիցենզիա ունեցող անձը /այսուհետ՝ Համակարգի օպերատոր/ իրականացնում է էլեկտրաէներգետիկական համակարգի տարեկան պլանավորումը, կազմում է էլեկտրաէներգետիկական համակարգի էլեկտրական էներգիայի և հզորության հաշվեկշիռները /ամսական կտրվածքով/ և էլեկտրակայանների հետ համաձայնեցված որոշում է տվյալ տարվա ընթացքում ներքին պահանջարկի բավարարման և անհրաժեշտ համակարգային ռեզերվների ապահովման համար ներգրավվող հիմնական սարքավորումների կազմը:

2. Արտադրող կայանները Համակարգի օպերատորի համաձայնությանն են ներկայացնում տարեկան ծրագրով նախատեսված սարքավորումների նորոգումների իրականացման ծրագիրը և ժամանակացույցը:

3. Յուրաքանչյուր արտադրող կայանի և հիդրոէլեկտրոկայանների կասկադի /համալիրի/ համար տվյալ ամսվա էլեկտրաէներգիայի /հզորության/ առուվաճառքի պայմանագրային հզորություն է համարվում հաշվարկային տարվա որևէ ժամանակահատվածում Համակարգի օպերատորի կողմից ներգրավված սարքավորումների անվանական հզորությունների գումարի առավելագույն մեծությունը՝ առանց տվյալ ամսվա մեջ նորոգման դուրսբերված սարքավորումների անվանական հզորությունների գումարի:

4. Արտադրող կայանների կողմից էլեկտրաէներգիայի /հզորության/ առուվաճառքի պայմանագրային պարտավորությունները համարվում են կատարված, եթե տվյալ ամսվա պայմանագրային հզորությունների կազմում ընդգրկված սարքավորումները տեխնիկապես սարքին վիճակում գտնվում են Համակարգի օպերատորի տրամադրության տակ և պատրաստ են զարգացնել նրա կողմից պահանջվող հզորությունը:

5. Համակարգի օպերատորի կողմից պահանջվող հզորությունը չի կարող գերազանցել սարքավորումների էներգետիկ բնութագրերով որոշվող այն առավելագույն հզորությունը, որը տվյալ սարքավորումը կարող է զարգացնել, հաշվի առնելով արտաքին սահմանափակող գործոնները /պայմանները/ ջերմային ու ատոմային կայաններում և ջրի ելքը՝ հիդրոէլեկտրակայաններում:

6. Սարքավորումների կամ շինությունների տեխնիկական վիճակից կամ վառելիքի անբավարար քանակի պատճառով պայմանագրային հզորության սահմանափակումները համարվում են էլեկտրաէներգիայի /հզորության/ առուվաճառքի պայմանագրային հզորության խախտումներ: